Էպիլեպսիայի բուժման համալիր կենտրոն

ՀՏՀ

Ի՞նչ է էպիլեպսիան:

Էպիլեպսիան ուղեղի տարածված խանգարում է, որը առաջանում է գլխուղեղի անոմալ էլեկտրական ակտիվության պատճառով կրկնվող նոպաներից:

CHLA-ի էպիլեպսիայի բուժման համալիր կենտրոնը Նյարդաբանական ինստիտուտի մի մասն է: Մեր էպիլեպսիայի բուժման թիմը բաղկացած է փորձառու մասնագետներից, ովքեր հոգ կտանեն ձեր երեխայի մասին: Կենտրոնը տրամադրում է բոլոր գործիքները, որոնք անհրաժեշտ են էպիլեպսիայի բոլոր փուլերի/մակարդակների ախտորոշման և բուժման համար, այդ թվում.

- Էպիլեպսիայի ստացիոնար մոնիտորինգի բաժին (EMU)
- Էլեկտրաուղեղագրության (EEG) վիդեո մոնիտորինգ հիվանդանոցում (ստացիոնար)
- Ամբուլատոր ԷԷԳ և ամբուլատոր (տնային այցելություն) վիդեո-ԷԳԳ ծառայություններ

ԷԷԳ գրանցում (օրինակ՝ գլխուղեղի ալիքների գրանցում»՝ անվտանգ թեստ է, որը հետևում է ուղեղի էլեկտրական ակտիվությանը:

Էպիլեպսիայի համալիր կենտրոնում բուժում են հիվանդության շատ բարդ վիճակներ: Մենք խնամքը հարմարեցնում ենք յուրաքանչյուր երեխայի եզակի կարիքներին՝ բարելավելու նրա կյանքի որակը: Էպիլեպսիայով երեխաների խնամքի տարբեր եղանակներ կան, այդ թվում՝

- դեղորայքային բուժում
- ռեզեկցիոն և լազերային աբլատիվ վիրահատություն
    - Ռեզեկցիոն վիրահատության ժամանակ նյարդավիրաբույժը հեռացնում է գլխուղեղի հյուսվածքը, որն առաջացնում է նոպաներ:
    - Լազերային աբլատիվ վիրաբուժության ժամանակ նյարդավիրաբույժն օգտագործում է լույս և ջերմություն՝ թիրախավորելու ուղեղի այն հատվածը, որն առաջացնում է նոպաներ:
- սննդակարգով թերապիա
- նեյրոմոդուլացիա
    - Նեյրոմոդուլյացիայի ժամանակ խթանիչը էլեկտրական ազդանշաններ է ուղարկում ուղեղին՝ նոպաների ակտիվությունը վերահսկելու համար:

Ո՞վ է խնամելու իմ երեխային:

Բժիշկների թիմը	Ձեր երեխայի բուժխնամքը վերահսկվելու է բժիշկների թիմի կողմից, այդ թվում՝ գլխավոր բժշկի կողմից: Պրակտիկանտներն ու օրդինատորները հատուկ ուսուցում են անցնում և նույնպես հոգ կտանեն ձեր երեխայի մասին:
Առաջատար պրակտիկանտներ	Մեր ավագ բուժքույրերից կամ բժշկի օգնականներից մեկը գլխավոր բուժող բժշկի հետ միասին ներգրավված կլինի ձեր երեխայի բուժման գործընթացի մեջ:

Բուժքույրական թիմ	Մեր դիպլոմավորված բուժքույրերի (RNs) և արտոնագրված պրակտիկանտ-բուժքույրերի (LVNs) թիմը կօգնի ձեզ խնամքի ձեր կարիքների հարցում:
Բուժքույրական խնամքի մենեջեր	Բուժքույրական խնամքի մենեջերը կարող է օգնել համակարգել և իրականացնել ձեր երեխայի խնամքի պլանը՝ ախտորոշման կարիքներին համապատասխան:
Սոցիալական աշխատող	CHLA նյարդաբանության բաժանմունքում բուժվող յուրաքանչյուր երեխային կցված է սոցիալական աշխատող: Այս մասնագետները կարող են տրամադրել. • աջակցություն (երեխայի շահերի պաշտպանություն) • ռեսուրսներ • ուղեգրեր խորհրդատվության համար • տեղեկատվություն աջակցության խմբերի մասին • նոր ախտորոշմանը հարմարվելը • ուղեցույց անվտանգության վերաբերյալ • ուսումնական պայմաններ, որոնք կարող են հասանելի լինել ձեր երեխայի դպրոցում
Գրանցված դիետոլոգ	Մեր գրանցված դիետոլոգները կարող են օգնել պատասխանել ձեր երեխայի սննդակարգին և սննդին վերաբերող հարցերին: Նրանք կօգնեն համոզվել, որ ձեր երեխան ճիշտ է սնվում: Մեր մասնագիտացված սննդաբանները կարող են առաջարկել Աթկինսի կետոգեն և ձևափոխված սննդակարգի թերապիա՝ նոպաները թեթևացնելու համար:
Ֆիզիոթերապիա և էրգոթերապիա	Ֆիզիոթերապևտը (PT) կօգնի ուժեղացնել ձեր երեխայի մարմինը և բարելավել շարժունակությունը: Էրգոթերապևտը (OT) կօգնի բարելավել ձեր երեխայի գործողությունների արդյունավետությունը առօրյայում: Նման գործողություններից են՝ հագնվելը, ուտելը և այլ առաջադրանքներ կատարելը, որոնք ձեր երեխան սովորաբար կատարում է օրվա ընթացքում:
Գենետիկայի հարցերով խորհրդատու	Գենետիկայի հարցերով խորհրդատուները բացատրական աշխատանք են տանում էպիլեպսիայի գենետիկ պատճառների վերաբերյալ: Նրանք կարող են տեղեկատվություն տրամադրել ձեր բժշկի կողմից առաջարկվող գենետիկական հետազոտության մասին:

ԷԷԳ տեխնիկական մասնագետները	Մեր ԷԷԳ մասնակետները պատասխանատու են ձեր երեխայի ԷԷԳ (գլխուղեղի էլեկտրական ակտիվության չափման) հետազոտության համար: ԷԷԳ-ն կարևոր հետազոտություն է նոպաները գնահատելու համար: Այս հետազոտությունը անցավ է և մասնագետը հետազոտության ընթացքում կխոսի ձեր երեխայի հետ՝ օգնելու նրան հարմարավետ և ապահով զգալ:
Պացիենտների սպասարկման ներկայացուցիչ (PSR)	Պացիենտների սպասարկման մեր ներկայացուցիչները կօգնեն ձեզ գրանցման և դուրսգրման հարցերում: Նրանք • կնշանակեն այցեր • կլրացնեն գրանցման փաստաթղթերը • կստանան ֆինանսական հաստատումը • կստանան ձեր երեխային այցելելու թույլտվությունը
Նյարդահոգեբան	Նյարդահոգեբանը արտոնագրված հոգեբան է, ով ունի ուղեղի աշխատանքի մասին մասնագիտացված գիտելիքներ: Այս մասնագետը կարող է ստուգել ձեր երեխայի մտածելակերպն ու վարքը: Սա կօգնի մեզ առաջարկություններ անել՝ բարելավելու ձեր երեխայի բարեկեցությունը, ներառյալ դպրոցական կյանքի պլանավորումը:

Որո՞նք են էպիլեպսիայի բուժման եղանակները:

- Թերապևտիկ բուժում
  - Ձեր բժիշկը կարող է նշանակել հակացնցումային դեղամիջոցներ (ASM), որոնք նաև կոչվում են հակաէպիլեպտիկ դեղամիջոցներ (AED): Դա կախված է նրանից, թե ինչ նոպաներ ունի ձեր երեխան: Կարող է ժամանակ պահանջվել՝ օպտիմալ դեղամիջոց և դեղաչափ գտնելու համար: Ձեր երեխան վերահսկողության տակ կլինի պարզելու, թե արդյոք դեղն իր ազդեցությունն ունի: Հնարավոր է պահանջվեն արյան հետազոտություններ և/կամ այլ թեստեր՝ բուժման ընթացքը ուղղորդելու համար:
  - Դեղերը չեն բուժում էպիլեպսիայից: Սակայն, երեխաների մեծ մասը կարող է նորմալ կյանքով ապրել՝ ունենալով վերահսկելի նոպաներ:
  - Դեղերը պետք է ընդունել ձեր երեխայի բժշկի ցուցումների համաձայն:
  - **Մի՛ դադարեք ընդունել կամ փոխեք ձեր երեխայի դեղերը կամ դեղաչափը՝ առանց բժշկի հարցնելու:**
- Սննդակարգով թերապիա
  - Ձեր երեխայի դիետոլոգը կարող է ձեզ և ձեր երեխային առաջարկել կետոգենիկ կամ Աթկինսի ձևափոխված սննդակարգը: Սննդակարգի այս տեսակները ենթադրում են շատ ճարպերի ընդունումը և ածխաջրերի սահմանափակումը: Դրա շնորհիվ օրգանիզմն ու ուղեղը ճարպեր են օգտագործում՝ էներգիա ստանալու համար: Հնարավոր է ձեր երեխայից կպահանջվի արյան և մեզի թեստեր անցնել՝ կետոնի մակարդակը չափելու համար:
  - Սննդաբանը կտեղեկացնի նաև, թե որ վիտամիններ/հավելումներ են անհրաժեշտ ձեր երեխայի համար:

    - Կետոգեն դիետա պահպանող 3 երեխաներից 2-ի մոտ նկատվում է նոպաների հաճախականության նվազում:
- Վիրաբուժական հետազոտություն
    - Եթե ձեր երեխայի վիճակը չի փոխվում այլ բուժումներից հետո, բժիշկը կարող է խորհուրդ տալ վիրահատություն:
    - Բժիշկների թիմը կվերլուծի ձեր երեխայի նոպաների պատմությունը և հետազոտություններ կանցկացնի՝ որոշելու, թե արդյոք վիրահատությունը լավ տարբերակ է: Այդ հետազոտություններից են.
        - Մագնիսական ռեզոնանսային պատկերացում/տոմոգրաֆիա (MRI)
        - Վիդեո էլեկտրաէնցեֆալոգրամմա (EEG)
        - Այլ մասնագիտացված պատկերումներ
        - Նյարդահոգեբանական հետազոտություն
    - Մեր մասնագետների թիմը ամեն շաբաթ հանդիպում է էպիլեպսիայի վիրաբուժության կոնֆերանսին՝ քննարկելու ձեր երեխայի կոնկրետ դեպքը: Ձեր բժիշկը խորհուրդ կտա վիրահատություն էպիլեպսիայի դեմ, եթե դա ձեր երեխայի համար օպտիմալ տարբերակն է:

- Թափառող նյարդի էլեկտրախթանում (VNS)
    - Կարող է առաջարկվել VNS թերապիան, եթե դեղորայքը չի ազդում նոպաների հաճախականության վրա:
    - VNS թերապիայի ընթացքում կրծքավանդակի մաշկի տակ վիրաբուժական միջամտությամբ տեղադրվում է փոքրիկ սրտի ռիթմավարի նման գեներատոր և մետաղալար: Այն էներգիայի թույլ իմպուլսներ է ուղարկում պարանոցի թափառող նյարդին: Իմպուլսները ազդանշաններ են ուղարկում ուղեղ, ինչը կարող է նվազեցնել նոպաները:
- Արձագանքման նեյրոստիմուլացիա (RNS)
    - Կարող է աառաջարկվել RNS թերապիան, եթե դեղորայքը չի ազդում նոպաների հաճախականության վրա: Կիզակետային նոպան այն նոպան է, որը տեղի է ունենում գլխուղեղի մի կողմում:
    - RNS թերապիայի ընթացքում գանգի մեջ տեղադրվում է խթանիչ: Այն գրանցում է EEG ակտիվությունը ուղեղի այն հատվածում, որտեղ նոպաներ են սկսվում: Այն նաև խթանում է ուղեղը և կարող է կանխել կամ դադարեցնել նոպաների ակտիվությունը:

Ո՞ւմ զանգահարել, եթե հարցեր կամ մտահոգություններ ունեմ:

- Զանգահարե՛ք մեր գրասենյակ աշխատանքային ժամերին երկուշաբթիից ուրբաթ, առավ. 8:00-ից մինչև երեկոյան 5:00-ը 323-361-2207 հեռախոսահամարով: Մենք հնարավորինս արագ կպատասխանենք ձեր հաղորդագրությանը: Կարող եք նաև ձայնային հաղորդագրություն թողնել՝ նշելով ձեր երեխայի լրիվ անուն-ազգանունը, ծննդյան տարեթիվը, ձեր բուժող բժշկին և զանգի պատճառները: Եթե ձայնային հաղորդագրություն եք թողել, խնդրում ենք, ձեր հեռախոսը ձեզ մոտ պահեք, որպեսզի մենք ձեզ հետ զանգենք:
- **CHLA-ի նյարդաբանական կլինիկա, գլխավոր գիծ՝ 323-361-2471**
- **CHLA-ի նյարդաբանական կլինիկա, բուժքույրական գիծ՝ 323-361-2207**
- Հաղորդագրություն թողեք MyChildren's Portal-ում: Այս կայքում կգտնեք լրացուցիչ տեղեկություններ, թե ինչպես միանալ պորտալին: https://www.chla.org/mychildrensla-patient-portal.
    - Հաղորդագրությունն ուղարկելուց հետո կստանաք հաստատում: Աշխատակիցը կպատասխանի պացիենտների պորտալի միջոցով 1 աշխատանքային օրվա ընթացքում:
- Եթե ձեր զանգի պատճառը բժշկական շտապ օգնություն ստանալն է, խնդրում ենք զանգահարել 911:
- Մեր աշխատակիցներից մեկը 24 ժամվա ընթացքում կպատասխանի ձեր զանգին կամ ձեր հաղորդագրությանը: Եթե 3 օրվա ընթացքում չստանաք պատասխան, զանգահարե՛ք մեզ:

Ինչպե՞ս կարող եմ համալրել իմ դեղերի պաշարը:

- Ձեր կլինիկա այցելության ընթացքում ձեր երեխայի բժիշկը նոր դեղատոմս կուղարկի ձեր նախընտրած դեղատուն: Նրանք կապահովեն բավարար համալրում մինչև կլինիկայում հաջորդ նշանակումը/այցը:
- Զանգահարե՛ք ձեր երեխային սպասարկող դեղատուն և ճշտե՛ք, արդյոք ձեր երեխայի դեղորայքը պատրաստ է:
- Դեղի շշի (կամ ձեր դեղատան կայքում/հավելվածում) հնարավոր է նշված լինի «Չի համալրվում»: Եթե նոր դեղատոմս է ուղարկվել, զանգահարեք և ճշտեք դեղագործից՝ ստուգելու, թե արդյոք դա ճիշտ է:
    - Դեղատանը կկարողանան ստուգել նշանակումը դեղատոմսի համարով:
- Նախապես կապվեք ձեր դեղատան հետ, ձեր երեխայի դեղորայքի սպառվելուց 5 աշխատանքային օր շուտ:
- Եթե երեխայի հետ ուշանում եք նշանակված այցից, կապվե՛ք պլանավորման բաժին՝ 323-361-2471 հեռախոսահամարով և ընտրե՛ք 1-ին տարբերակը:

EEG արդյունքները

- EEG արդյունքները պատրաստ կլինեն ստացիոնար հետազոտության օրվանից 1-2 աշխատանքային օր հետո:
- Վիդեո և ամբուլատոր EEG արդյունքները պատրաստ կլինեն հետազոտության օրվանից մոտավորապես 1-2 շաբաթ հետո:
- Եթե սա ձեր երեխայի առաջին այցելությունն է մեր կլինիկա, խնդրում ենք դիմել ձեր մանկաբույժին կամ ուղղորդող բժշկին: Իրենք ձեզ հետ կքննարկեն EEG արդյունքները: Դուք կարող եք տեսնել այս արդյունքները պացիենտների պորտալի միջոցով:
- Եթե երեխան ունի նշանակված այց մեր կլինիկայում, ապա նյարդաբանը այդ ժամանակ կքննարկի EEG արդյունքները:
- Եթե ձեր երեխան արդեն հետազոտվում է մեր կլինիկայում, ձեր երեխայի բժիշկը ձեզ հետ կքննարկի հետազոտության արդյունքները: Դա տեղի կունենա կլինիկայում կամ հեռուստաբժշկական սեանսի ձևով:

Եթե ինձ անհրաժեշտ է բժշկի կողմից լրացված ձևաթուղթ կամ նամակ:

- Լրացված ձևերը և ծնողների հարցաթերթիկները ուղարկեք CHLA պորտալի միջոցով՝ https://www.chla.org/mychildrensla-patient-portal: Դատարկ դպրոցական ձևաթղթեր չներկայացնել: Դպրոցական ձևաթղթերը պետք է ներառեն ձեր երեխայի անձնական տվյալները: Անձնական տվյալներն են՝ անուն ազգանունը լրիվ, ծննդյան ամսաթիվը, դեղերը և չափաբաժինները, որոնք պետք է տան դպրոցում:
- Ցանկացած ձևաթուղթ լրացնելը տևում է 10-14 աշխատանքային օր (դպրոցական նամակներ, կառավարության ձևաթղթեր, DMV փաստաթղթեր և այլն):

Որտե՞ղ կարող եմ տեսնել երեխայիս հետազոտությունների արդյունքները:

- Լաբորատոր արդյունքների և պատկերների համար այցելե՛ք MyChildren's պորտալ՝ տեսնելու երեխայի լաբորատոր թեստերի արդյունքները: Մեր անձնակազմը կկապվի ձեզ հետ միայն այն դեպքում, եթե լաբորատոր հետազոտությունների արդյունքները կասկածներ առաջացնեն:
    - https://www.chla.org/mychildrensla-patient-portal
- Կարող եք դիմել լրացուցիչ հանդիպում՝ քննարկելու արդյունքները:

Այցելություններ

- Առերես/անձամբ
    - Պլանավորեք ձեր երեխայի հետ այցերը բժշկի մոտ՝ ըստ ձեր բժշկի ցուցումների: Հիվանդների սպասարկման մեր ներկայացուցիչները (PSR) կօգնեն ձեզ նշանակել հանդիպումներ և կառավարել ձեր կլինիկայի ժամանակացույցը:
        - Այցը չեղարկելու կամ տեղափոխելու համար զանգահարե՛ք մեր գրանցումների կենտրոն (323) 361-2471 հեռախոսահամարով և ընտրեք տարբերակ 1-ը:
    - Խնդրում ենք ձեր հանդիպմանը ժամանել 30 րոպե շուտ, որպեսզի ժամանակ ունենաք կայանելու և գրանցվելու ընդունարանում:
    - Եթե ձեր երեխան նոր պացիենտ է և գալիս եք ավելի քան **20 րոպե ուշացումով**, հնարավոր է ձեզանից պահանջեն նոր հանդիպում նշանակել:
    - Եթե ձեր երեխան հերթական հանդիպմանն է գալիս ավելի քան **15 րոպե ուշացումով**, հնարավոր է ձեզանից պահանջեն նոր հանդիպում նշանակել:
    - Խնդրում ենք բերել բոլոր ընթացիկ դեղամիջոցները և համապատասխան թեստի արդյունքներն ու գրառումները (MRI/EEG/CT (ՄՌՏ/ԷԷԳ/ԿՏ) պատկերներ):
        - Խնդրում ենք դեղերը բերել իրենց օրիգինալ սրվակներով կամ տուփերով:
    - Ձեր երեխան պետք է ներկա լինի հանդիպմանը:
- Հեռուստաբժշկություն
    - Ձեր երեխայի բժիշկը կարող է նշանակել *հեռուստաբժշկական* հանդիպում: Կախված նրանից, թե ինչպես կցանկանայիք կապվեն ձեզ հետ, ձեզ կուղարկվի հրավեր էլեկտրոնային փոստով կամ sms-ով ձեր նշանակված հանդիպման ժամից մոտավորապես 15-20 րոպե առաջ: Խնդրում ենք նախապես մուտք գործել, ստուգել ձեր համակարգիչը, պլանշետը կամ բջջային հեռախոսը: Հնարավոր է, որ ձեզ անհրաժեշտ լինի թարմացումներ ներբեռնել/տեղադրել ձեր սարքում:
        - Լրացուցիչ տեղեկությունների համար, թե ինչպես մուտք գործել և պատրաստվել ձեր երեխայի հեռուստաբժշկական հանդիպմանը, այցելե՛ք https://www.chla.org/virtual-visits-childrens-hospital-los-angeles:
    - Ձեր երեխան պետք է ներկա լինի հանդիպմանը, իսկ դուք պետք է դրսում հանգիստ վայրում գտնվեք:

Ո՞ւմ կարող եմ զանգահարել, եթե ունեմ վճարման կամ ապահովագրության հետ կապված հարց:

- Ապահովագրական ծրագրի/ծածկույթի մանրամասների համար դիմեք ձեր երեխայի ապահովագրական ընկերությանը: Նրանք կհաստատեն, թե արդյոք ձեր երեխայի բժիշկը ներառված է ձեր երեխայի ապահովագրական պլանի մեջ:
- Ձեր երեխայի հիվանդանոցային այցելությունների և ընթացակարգերի հաշիվների վերաբերյալ հարցերի համար դիմեք Հիվանդի ֆինանսական ծառայությունների գրասենյակ՝ (323) 361-2515 հեռախոսահամարով:
- Ձեր երեխայի բժշկի հաշիվների վերաբերյալ հարցերի համար դիմեք Բժիշկների խմբի գրասենյակ՝ (323) 361-2336 հեռախոսահամարով:

Տեղեկություն նոպաների մասին

- Խնդրում ենք դիտել և ծանոթանալ նոպաների ժամանակ առաջին օգնության գործողություններին (ամբողջական նկարագրությունը թղթապանակում է).
- Եթե ձեր երեխայի մոտ նոպա է, դեղը ներարկեք/տվեք երեխայի նոպայից փրկարարական պլանի համաձայն:
- Առաջնորդվեք Նոպայի ժամանակ գործողությունների պլանով Այս փաստաթուղթը ներառում է.
    - Տեղեկություն նոպաների մասին
    - Ինչպե՞ս վարվել նոպայի ժամանակ
        - Առաջին օգնություն ցանկացած նոպայի ժամանակ
        - Երբ կարող է պահանջվել փրկարարական բուժում
        - Խնամք նոպայից հետո
        - Հատուկ ցուցումներ
        - Ամենօրյա դեղամիջոցներ նոպաների համար
- Խնդրում ենք վարել ձեր երեխայի նոպաների ակտիվության գրանցամատյանը Nile AI App հավելվածում (https://www.nile.ai/patients/) կամ տրամադրված նոպաների վերահսկման սարքի միջոցով (ամբողջական տեղեկատվությունը հասանելի է թղթապանակում).

Էպիլեպսիայի թեմայով ռեսուրսներ

- CHLA Ընտանեկան ռեսուրս կենտրոն՝ https://www.chla.org/family-resource-center
- Էպիլեպսիայի հիմնադրամ՝ https://www.epilepsy.com/
    - Էպիլեպսիայի հիմնադրամի գործիքակազմ՝ https://www.epilepsy.com/living-epilepsy/toolbox
    - SUDEP (էպիլեպսիայի ժամանակ հանկարծակի անսպասելի մահ)՝ https://www.epilepsy.com/complications-risks/early-death-sudep
- Էպիլեպսիայի կենտրոնների ազգային ասոցիացիան. https://www.naec-epilepsy.org/for-patients/patient-resources/
- Հիվանդությունների վերահսկման և կանխարգելման կենտրոններ՝ https://www.cdc.gov/epilepsy/managing-epilepsy/find-support.html
- Նյարդաբանության ամերիկյան ակադեմիա՝ https://www.aan.com/practice/epilepsy-education-resources
- Նյարդաբան-վիրաբույժների ամերիկյան ասոցիացիան. https://www.aans.org/en/Patients/Neurosurgical-Conditions-and-Treatments/Epilepsy
- Danny Did հիմնադրամ – Էպիլեպսիա և SUDEP (հանկարծամահ)՝ https://www.dannydid.org/epilepsy-sudep/

QR կոդ՝

Այս փաստաթղթում բերված բոլոր հղումները կարելի է բացել՝ օգտագործելով ստորև ներկայացված QR կոդը:

Հաճախակի տրվող հարցեր (ՀՏՀ)

Որքա՞ն ժամանակ կպահանջվի իմ երեխայի դեղերի պաշարի համալրման համար ձեր գրասենյակ իմ զանգից հետո:
Մեր PSR-ներից մեկի հետ խոսելու կամ ձայնային հաղորդագրություն թողնելու օրվանից սկսած, կատարման ժամկետը սովորաբար 1-3 աշխատանքային օր է: Մեր PSR-ները կտեղեկացնեն մեր բժշկական թիմին հաստատման հարցման մասին: Մենք կխնդրենք ձեզ հաջորդ օրը դիմել դեղատուն:

- Եթե ձեր երեխայի դեղերի պաշարը ամբողջությամբ սպառվել է, մեր բժիշկների թիմի ներկայացուցիչը կզանգահարի ձեզ մինչև նույն աշխատանքային օրվա ավարտը:
- Եթե դեղերը պատրաստ չեն 3 օրվա ընթացքում, մեր բժշկական թիմի ներկայացուցիչը կզանգահարի ձեզ և կտրամադրի նոր տեղեկություններ:

Եթե երեխաս փսխում է, շարունակե՞մ նրան դեղ տալ:
Հետևեք բժշկի ցուցումներին, արդյոք ձեր երեխան պետք է նորից ընդունի նոպաների դեղամիջոցը, թե սպասի մինչև հաջորդ դեղաչափը:

Եթե երեխաս բաց է թողել նոպաների դեղը, ինչպե՞ս վերականգնեմ ժամանակացույցը: Սպասե՞մ հաջորդ դեղաչափի ընդունման ժամին:
Եթե ձեր երեխան ուշացրել է դեղաչափի ընդունումը իր ընդունման ժամից 2 ժամով, դուք դեռ կարող եք տալ (ներարկել) բաց թողնված դեղաչափը: Եթե ձեր երեխան ուշացրել է դեղաչափի ընդունումը իր ընդունման ժամից ավելի քան 2 ժամով, մի՛ տվեք այդ դեղաչափը և սպասե՛ք մինչև հաջորդ դեղաչափի ընդունման (ներարկման) ժամը:

Կարո՞ղ է արդյոք իմ երեխան ընդունել առանց դեղատոմսի դեղեր (Advil, Tylenol և այլն) այն դեղամիջոցների հետ միասին, որոնք նշանակվել են նոպաների համար:
Այս դեղերը կարող են ընդունվել ձեր երեխային նշանակված նոպաների դեղամիջոցների հետ միասին: Տեղեկացրե՛ք ձեր հիմնական բժշկին և հետև՛ք դեղորայքի օգտագործման հրահանգներին:

Եթե երեխայիս մոտ ալերգիկ ռեակցիա առաջանա, կարո՞ղ եմ նրան Benadryl տալ:
Եթե ձեր երեխայի մոտ ալերգիկ ռեակցիա է առաջացել, ապա կարող եք Benadryl տալ իր նոպաների դեղամիջոցների հետ միասին: Հետևե՛ք առանց դեղատոմսի տրվող դեղորայքի օգտագործման ցուցումներին և զանգահարե՛ք ձեր հիմնական բժշկին: Նա ձեզ լրացուցիչ բժշկական օգնություն և խորհրդատվություն կտրամադրի:

Ի՞նչ անել, եթե երեխայիս մոտ ալերգիկ ռեակցիա է առաջացել նոպաների դեղամիջոցի նկատմամբ:
Դադարեցրեք նոպաների այդ դեղամիջոցների ընդունումը և տեղեկացրեք ձեր նյարդաբանին՝ նոր նշանակում ստանալու համար:

Կարո՞ղ ենք մեր երեխային տանել զվարճանքի այգիներ (Դիսնեյլենդ), «ամերիկյան բլրակներ» կարուսել նստել և այլն:
Այո, բայց հիշե՛ք, որ ձեզ հետ պետք է ունենաք երեխայի փրկարար դեղեր: Խուսափե՛ք այն կարուսելներից և թարթող լույսերով զվարճանքներից, եթե դրանք նոպա են առաջացնում:

Երեխաս կարո՞ղ է պատվաստվել:

Մանկական պատվաստանյութերի մեծ մասը և նոր COVID-19 պատվաստանյութը անվտանգ են և խորհուրդ են տրվում նյարդաբանական խնդիրներ ունեցող երեխաների համար: Այնուամենայնիվ, ավելի լավ է խորհրդակցել ձեր երեխայի բժշկի հետ՝ ձեր երեխայի կոնկրետ ախտորոշման և բուժման վերաբերյալ խորհրդատվություն ստանալու համար: Նկատի ունեցե՛ք, որ նյարդաբանական հիվանդություն ունեցող երեխային, ով նաև անցնում է իմունային թերապիա (ստերոիդներ, IVIg, Rituximab կամ այլ բուժում), հնարավոր է պատվաստումների հատուկ ժամանակացույց պահանջվել: Որոշ պատվաստանյութեր նրանց համար կարող են հակացուցված լինել:

Երեխաս կարո՞ղ է ինքնաթիռ նստել:

Այո, և հիշե՛ք ձեզ հետ բերել երեխայի փրկարար դեղերը և ամենօրյա դեղերը իրենց օրիգինալ սրվակներով/տուփերով՝ դեղատան օրիգինալ պիտակներով: Հետևե՛ք, որ նշանակված դեղերը ընդունվում են ըստ ժամանակացույցի: Խորհուրդ ենք տալիս թայմեր դնել: Սա կօգնի ձեզ հիշել չափաբաժինները թռչելիս կամ եթե տարբեր ժամային գոտիներով եք ճանապարհորդում:

Երեխաս կկարողանա՞ սպորտով զբաղվել:

Սպորտաձևերի մեծ մասը անվտանգ են էպիլեպսիայով երեխաների համար: Քննարկե՛ք բոլոր լրացուցիչ ցուցումները ձեր երեխայի բժշկական թիմի հետ: Հիշե՛ք, որ ձեզ հետ պետք է ունենաք երեխայի փրկարար դեղերը: Խորհուրդ ենք տալիս սաղավարտ կրել հեծանիվ կամ դահուկ քշելու ժամանակ: Երեխան չպետք է առանց վերահսկման/մենակ բարձրանա որևէ բարձունք (օր.՝ ժայռ/ժայռապատեր մագլցի):

Երեխաս կկարողանա՞ լողով զբաղվել:

Այո, բայց երեխան կարող է լողա միայն 1:1 չափահասի հսկողության ներքո, այդ թվում, երբ լոգանք է ընդունում: Խորհուրդ չի տրվում սուզվել (կամ ցանկացած բաց ջրային տարածքում լողալ, օր.՝ օվկիանոսում կամ լճում):

Ո՞ր ժամին կարող եմ զանգահարել գրասենյակ, եթե երեխաս նոպա ունի:

Եթե ձեր զանգի պատճառը բժշկական շտապ օգնություն ստանալն է, զանգահարե՛ք 911 և հետևե՛ք ձեր երեխայի նոպայի ժամանակ օգնության պլանի գործողություններին: Եթե ձեր երեխայի նոպան տարբերվում է նախորդ նոպաներից, զանգահարե՛ք մեր գրասենյակ և տեղեկացրեք բժիշկներին: Նոպաների ակտիվության այս փոփոխությունը կարող է նշանակել հաճախականության կամ տևողության ավելացում: Բոլոր նոպաները գրանցեք նոպաների գրանցամատյանում/օրացույցում: Այն կքննարկվի ձեր բժշկի հետ ձեր հաջորդ այցի ժամանակ:

Որքա՞ն ժամանակ է պահանջվում գենետիկական հետազոտության արդյունքները ստանալու համար:

Գենետիկական թեստի արդյունքների ստացման ժամանակը տատանվում է՝ կախված հետազոտության տեսակից: Այնուամենայնիվ, արդյունքների ստացման ժամանակը միջինում 4-6 շաբաթ է: Անհետաձգելի դեպքերում նախնական արդյունքները կարող են տրամադրվել 1-4 շաբաթվա ընթացքում: Էկզոմի կլինիկական հաջորդականության հետազոտության, վերլուծության և մեկնաբանման ժամանակը սովորաբար մոտ 3 ամիս է: Կլինիկական էկզոմների հաջորդականությունը ախտորոշիչ գործիք է օրգանիզմի գեներում փոփոխությունները ստուգելու համար: Այս տեղեկատվությունը կօգտագործվի գենետիկական խորհրդատվության ժամանակ: Այս տեղեկատվությունը կարող է օգտակար լինել ձեր երեխայի բուժման ծրագրի ընտրության համար:

Արդյո՞ք իմ երեխան պետք է դադարեցնի նոպաների դեմ դեղորայք ընդունելը մինչև բուժպրոցեդուրաներ (օրինակ՝ ԷԷԳ, ՄՌՏ և այլն):
Շարունակե՛ք ընդունել ձեզ նշանակված դեղերը, եթե բժիշկները այլ բան չեն ասել:

Որտե՞ղ պետք է պահեմ դեղերը, որոնք անհրաժեշտ են երեխայիս նոպայի դեպքում որպես շտապ օգնություն:
Դուք պետք է միշտ ձեզ հետ ունենաք ձեր երեխայի նոպաների դեղերը (այսինքն՝ կլինիկայում այցի ժամանակ, ԷԷԳ-ի ժամանակ և այլն):

Ինչպե՞ս կարող եմ գրանցվել այցի համար կամ նշանակված հետազոտություններ անցնեմ երեխայիս հետ:

- ԷԷԳ՝ Մեր թիմը ձեզ համար օր կնշանակի ԷԷԳ-ի համար:
- ՄՌՏ՝ Դուք պետք է զանգահարեք մեր պատկերային ախտորոշման բաժին՝ 323-361-2411 հեռախոսահամարով և ՄՌՏ-ի օր նշանակեք ձեր երեխայի համար:
- Լաբորատոր հետազոտություններ՝ Լաբորատոր հետազոտությունները կարելի է անցնել CHLA-ում կամ այլ կլինիկայում: Զանգահարե՛ք 323-361-2471 հեռախոսահամարով՝ օր պլանավորելու համար:
- Ուղեգրումներ Եթե ձեզ չեն զանգահարել այս կամ այն բաժնից, զանգահարե՛ք մեր գրասենյակ 323-361-2471 հեռախոսահամարով:

Ինչպե՞ս կարող եմ ստանալ երեխայիս բժշկական փաստաթղթերը:
Մեր գրասենյակը չի կարող ձեզ տրամադրել ձեր երեխայի բժշկական փաստաթղթերը: Կապվեք Առողջապահական տեղեկատվության վարչություն՝ 323-361-2386 հեռախոսահամարով՝ ձեր երեխայի փաստաթղթերը պահանջելու համար:

Ի՞նչ անել, եթե իմ երեխային թույլտվություն է պետք վիրաբույժ կամ ատամնաբույժ այցելելու համար:
Խոսե՛ք ձեր երեխայի հիմնական բժշկի հետ: Մեր գրասենյակը չի կարող թույլտվություն տալ նման բուժընթացակարգերի կամ այցելությունների համար:

Ինչ անել, եթե թափել եմ երեխայիս հեղուկ դեղերը նոպաների համար կամ կորցրել եմ երեխայիս նոպաների դեղերը:
Զանգահարե՛ք ձեր դեղատուն, և նրանք կհամակարգեն հետագա գործողությունները մեր բժշկական թիմի հետ:

Կարո՞ղ եմ լրացուցիչ դեղամիջոց ստանալ իմ երեխայի մյուս խնամողների համար:
Այո, խնդրում ենք տեղեկացնել ձեր բժշկին ձեր հաջորդ այցելության ժամանակ, եթե ձեզ անհրաժեշտ են լրացուցիչ փրկարար դեղամիջոցներ: